# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com


ՈՐՈՇՈՒՄ

«10» հունիսի 2022թ. № **59** - Ա

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «ՄԱՅՖՈՐԵՍԹ.ԷՅԷՄ» բնապահպանական հասարակական կազմակերպության փոխտնօրեն Լիլիթ Մարտիրոսյանի 2022 թվականի մայիսի 5-ի թիվ ՄՖ/Ե-060522-01 գրությունը՝ Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-095-0273-0058 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 147,84429 հեկտար մակերեսով արոտավայր հողատեսքի հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 25 տարի ժամկետով, անտառ տնկելու նպատակով, «ՄԱՅՖՈՐԵՍԹ.ԷՅԷՄ» բնապահպանական հասարակական կազմակերպությանը տրամադրելուն:

2. Առաջարկել Սպիտակ համայնքի ղեկավարին «ՄԱՅՖՈՐԵՍԹ.ԷՅԷՄ» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր սույն որոշման 1-ին կետով սահմանված պայմաններով, ինչպես նաև լրացուցիչ պայմանով, որ Սպիտակ համայնքը իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը՝ հողամասը պայմանագրին անհամապատասխան օգտագործելու դեպքում:

| ԿՈՂՄ ( 14 ) | ԴԵՄ ( 5 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|
| ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ԱՄԻՐՅԱՆ | |
| ՀԱՄԼԵՏ ՄԱԶՄԱՆՅԱՆ | ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ | |

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԳԱԳԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 10

ք. Սպիտակ